ԼՐԱՏՈՒ

ՄՈՂ ԱՎԱՆԻ ՀՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐԸ

ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և աղգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 1930 թ. հունիս—օգոստոս ամիսներին հետախուզական բնույթի պեղումներ կատարեց Մողում (ղեկավար՝ Գ. Հ. Կարախանյան)։ Հնավայրը գտնվում է Եղեգնաձորի շրջանում՝ շրջկենտրոնից շուրջ 11 կմ հարավ-արևելք, Արփա գետի աջափնյա բարձունքների վրա, Ջերմուկ տանող մայրուղուց կողմում։ Ներկայումս պահպանված ավերակները գրաղեցնում են մոտ 8 հեկտար տարածություն։

Մատենագրության մեջ Մողն առաջին անգամ հիշատակվում է VIII դ., կապված Ստեփանոս Իմաստասերի եղեռնական սպանության հետ, որին հաջորդել է 735 թ. հուլիսի 21-ի (Հայոց 189 թ. Հրոտից 15-ի) երկրաշարժը. «...և կալաւ խաւար շօշափելի զգաւառն ամենայն զաւուրս 40՝ և շարժումն և դղրդումն սաստիկ. զի եռայր երկիրն ահեղ դողացմամբ յանդնգոց և բարձրանայր մինչև ի վեր և անդէն իբր զալիս ծովու փլուզանիւր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց քակտէին, տունք և ապարանք գետեցիկք լինէին դերեզմանք բնակչաց. աղբիւրք խցէին, գետք կորչէին, և ամենայն տեղի երերէր տատանմամբ, և ձայնք մարդկեղէն բառաչող լսելի լինէին ի ներքուստ յանդնդոց...»[1]։ Երկրաշարժի մասին հիշատակություններ են պահպանվել նաև Կիրակոս Գանձակեցու[2], Մխիթար Այրիվանեցու[3] երկերում և Հայամավուրքում[4]։ Գանձակեցին տալով երկրաշարժի նկարագրությունը, նշում է նաև Մող ավանի բնակչության թիվը. «...և ահա խաւար ի վերուստ անտեսանելի կալաւ զՄողանն սահմանն, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն, և խորասոյզ եղեալ ընկղմեցան կենդանւոյն ոգիք իբրև տասն հազարս»[5]։ Ավերվելուց հետո Մողը հետագայում վերականգնվել է։ XIII դ. այն մտնում էր Սյունյաց հոգևոր թեմին հարկատու բնակավայրերի մեջ և հիշատակվում է Ստ. Օրբելյանի հարկացուցակում՝ 12 չափ հարկով[6]։ XIX դ. վերջից մինչև մեր օրերը Մողի հուշակոթողների մասին տեղեկություններ են թողել մի շարք ուսումնասիրողներ[7]։ 1967 թ., ի թիվս Վայոց ձորի բազմաթիվ արձանագրությունների, հրատարակվեցին նաև Մողի մի քանի հուշակոթողների վիմագրերը[8]։

1980 թ. հնավայրի ամենատարբեր մասերում ուսումնասիրվեցին մի քանի կացարաններ և մի քանդված եկեղեցի, որը գտնվում է ավերակների հարավ-արևելյան հատվածում։ Եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն-քառանկյունի թաղակապ սրահ է՝ շարված կոպտատաշ բազալտե քարերով։ Արևելյան և հյուսիսային պատերով հենված է ժայռին և տեղանքի նկատմամբ ունի իշխող դիրք։ Որմերի պահպանված մասի բարձրությունը հասնում է 2 մ., լայնությունը՝ 1,4—1,5 մ։ Եկեղեցին ներսից ունի 6,15 մ երկարություն և 4,45 մ լայնություն։ Արևմտյան մասում բաց դռվիթն է, որտեղ գտնվել են X—XVI դդ. տապանաքարեր և խաչքարեր (մեծ մասը տեղահանված ու շարդված)։ Պեղումներից հայտնաբերվել են գիտական հետաքրքրություն ներկայացնող նյութեր. հասարակ և զնարակած խեցեղենի՝ կարասների, քրեղանների,

---

1 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մ., 1861, էջ 103—104 (այսուհետև՝ Ստ. Օրբելյան)։

2 «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 68—70 (այսուհետև՝ Գանձակեցի)։

3 «Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մ., 1860, էջ 52։

4 «Ցայսմավուրք», Կ. Պոլիս, 1834, էջ 38։

5 Գանձակեցի, էջ 70։

6 Ստ. Օրբելյան, էջ 373։

7 Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողութիւնք, ԺԷ («Փորձ», 1877/1878, № 4, էջ 349—350), Ե. Լալայեան, Վայոց ձոր կամ դարալագեազ («Ազգագրական հանդես», իններորդ տարի, գիրք 12, Թիֆլիս, 1905, էջ 256—257), Հ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955, էջ 38—39։

8 «Դիվան հայ վիմագրության», կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, պրակ 3, Երևան, 1967, էջ 23—25 (այսուհետև՝ «Դիվան», 3)։

գնակների, ձիթաճրագների, ծխամորճի և այլնի բեկորներ, բրոնզե ու ապակյա ապարանջանների մասեր և ուլունքներ։

Պեղումների ընթացքում ուսումնասիրվել են երկու գերեզմանոցներ, ինչպես նաև վերը նշված եկեղեցու շրջակայքում հայտնաբերված խաչքարեր ու տապանաքարեր։ Հետաքրքրական է եկեղեցու ներսում գտնված բազալտե կոթողը (տախտակ I, նկ. 1)։ Այն լավ մշակված, վերին մասում կոր, փոքր-ինչ նեղացող իրանով հուշասյուն է (բարձրությունը՝ 47 սմ, լայնությունը վերին մասում՝ 26 սմ, ներքևում՝ 18 սմ)։ Հարթեցված մակերեսի վերին մասում 18,3 սմ տրամագիծ ունեցող խորադիր շրջանի մեջ քանդակված է հավերժություն խորհրդանշող պատկեր։ Այսօրինակ բազմաթիվ հուշակոթողներ են կանգնեցված Հավուց Թառում՝ բլրի վրայի եկեղեցու արևելյան մասում



Տախտակ I.

գտնվող գերեզմանատանը, բայց դրանք չունեն ո՛չ արձանագրություն, ո՛չ էլ որևէ պատկեր։ Նմանատիպ կոթողներ կան նաև Ցաղաց քար հնավայրում։ Սրանք ունեն հիշատակագրեր և թվագրված են X—XI դդ.[9]։

Վերոհիշյալ եկեղեցու արևմտյան արտաքին պատի տակ բացվեցին սպիտակավուն ավազաքարից և մոխրագույն բազալտից պատրաստված XIV—XV դդ. բնորոշ հարթ տապանաքարեր, որոնցից շատերի մակերեսները թեև խիստ

Արձանագրության թվականը չի պահպանվել։ Եկեղեցու արևմտյան պատի տակ, մուտքի հարավակողմում պատին հենված է եղել այժմ տեղահանված կոթողի մի պատվանդան (տախտակ I, նկ. 2), որը մոխրագույն, լավ մշակված բազալտից է (բարձրությունը՝ 94 սմ, լայնությունը՝ արևմտյան կողմում՝ 54 սմ, իսկ հյուսիսային և հարավային կողմերում համապատասխանաբար՝ 66 և 65 սմ)։ Պատվանդանի երեք նիստերի վրա փորագրված է եր-

Տախտակ II.

քայքայված են, բայց նշմարվում են մարդկային, ինչպես նաև խորհրդանշային մի շարք գծապատկերներ։ Տապանաքարերից մեկի վրա (երկարությունը՝ 1,2 մ, լայնությունը՝ 0,4 մ) քանդակված է մարդկային խորադիր դիմապատկեր, որի աչ և ձախ կողմերում մեկական ռելիեֆ վարդյակներ են (տախտակ II, նկ. 1)։ Դիմապատկերից ներքև կա վեց տողանոց հետևյալ տապանագիրը.

ԱՅՍ Է ՀԱ/ՆԳԻՍՏ/ ՄԱՆՈՒ/ԷԼԻՆ/ ՅԻՇԵՑԷ/Ք Ի ՔՍ։

կուական տող արձանագրություն (տախտակ II, նկ. 2).

ԱՒ/ԱՆ ՄՈՒ/ՍԷՍ ԹՎ/ՉԿ (1311)։

Եկեղեցու և գավիթի տարածքում գտնվել է նաև X—XI դդ. երկու խաչքար, որոնք ավելի ուշ օգտագործվել են ինչ-որ շինություն երեսապատելու համար։ Մեծ վարպետությամբ է կերտված դեղնավուն ավազաքարե խաչքարի մասը (բարձրությունը՝ 30 սմ, լայնությունը՝ 54 սմ)։ Պահպանվել է ստորին ուղղահայաց խաչաթևը (տախտակ I, նկ. 3), որից ներքև քանդակված է ութթևանի ռելիեֆ վարդյակ։ Երկրաչափական մոտիվներով զարդարված մակերեսի վերին աջ անկյունի թռչնաքանդակի վրա կա հինգ խորադիր անկանոն շրջանակ։

9 Արձանագրությունները հրատարակված չեն։

Նմանատիպ երկրաչափական զարդամոտիվով է եղերված Գնդեվանքի 937 թ. խաչքարը[10]։ Նույնպիսի զարդերիդ ունի Շատինի վանքի ս. Սիոն եկեղեցու արևմտյան պատի մեջ ագուցված 941 թ. խաչքարը[11]։ Թռչնապատկերի վրայի խորադրի շրջանակների զուգահեռները հաճախ են հանդիպում X—XIII դդ. հուշակոթողներում[12]։ Շրջանակները արված են կլոր գործիքով հարվածելու միջոցով։ Միևնույն տեխնիկայով շրջանակներ են դրվագված Վայոց ձորի մի շարք հուշարձանների (Շատինի վանք, Ցաղաց քար, Ալայաղ և այլն), Հին Գետիկի, Աստվածընկալ վանքի X—XIII դդ. խաչքարերի վրա։ Նմանատիպ շրջանակներով են զարդարված IX—X դդ. հայկական գեղարվեստական մետաղագործության մի շարք նմուշներ։

Հետաքրքրական են նաև եկեղեցու գավիթում հայտնաբերված օրորոցաձև երկու տապանաքարերը (տախտակ II, նկ. 3, 4), որոնց վրա պատկերված են միևնույն տեսարանները. տապանաքարերի հյուսիսային երեսներին խնջույքի տեսարան է, հարավայիններինը՝ երեք քանդակազարդ կամարների տակ մեկական խաչ։ Խնջույքի տեսարանը պատկերված է հետևյալ։



Տախտակ III.

---

10 «Դիվան», 3, էջ 15, լուսանկար 8։

11 Նույն տեղում, էջ 156։

12 Լ. Ազարյան, Հայկական խաչքարեր, Փարիզ, 1973։

ների նմանություններից ենթադրում ենք, որ գրանք միևնույն վարպետի ձեռքի գործեր են։

Հնավայրի հյուսիս-արևելյան կողմում տարածվում է Մոզի XIII—XIV դդ. գերեզմանոցներից մեկը, ուր պահպանվել են ավելի քան երկու հարյուր հուշակոթողներ՝ խաչքարեր և տապանաքարեր։ Գերեզմանատան արևմտյան մասում, ճանապարհի աջ եզրին, կանգնած սպիտակ ավազաքարե խաչքարերից մեկը հետաքրքրական է քանդակների բազմազանությամբ և կատարման նրբությամբ։ Խաչքարի ստորին մասը մաքրելուց հետո պարզվեց, որ այն (բարձրությունը՝ 156 սմ, լայնությունը՝ 82 սմ) կանգնեցված է 50 սմ բարձրություն ունեցող զանգվածեղ պատվանդանի վրա։ Խաչքարի վերին մասը հողմահարված է, ստորինը՝ հողի տակ մնալով անհամեմատ լավ է պահպանվել։ Կենտրոնական մասում, բուսական մոտիվներով ոճավորված կամարի տակ, խորագիր մակերեսի վրա ռելիեֆ խաչն է, որի թևերն ունեն եզրերում հյուսկեն, կենտրոնում՝ եղնձաձև զարդեր։ Խաչի ստորին մասում հյուսկեն քանդակներ ունեցող ձողիկի վրա ավանդական արմավն է, որը տվյալ դեպքում վերածված է կիսաշրջանաձև ռելիեֆ գոտիների։ Դրանք համաչափորեն տեղադրված են խաչաթևի երկու կողմերում։ Սրանից ներքև, ուղղահայաց քանդակազարդ ձողիկի երկու կողմերում, կան հյուսկեն երկրաչափական զարդեր ունեցող մեկական ռելիեֆ խաչեր։ Խաչապատկերները եզերվում են ոճավորված շրջանակով։ Խաչքարի քիչի կենտրոնում պատկերված է փոքրիկ հավասարաթև խաչ, որի երկու կողմերում նույնատիպ հյուսածո զարդեր են։ Կոթողի երկու եզրերին, քառակուսի մակերեսների մեջ նշմարվում են ութթևանի վարդյակներ, ինչպես նաև խորագիր և վերագիր խաչեր։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում խաչքարի ստորին մասում փորագրված երեք տողանի արձանագրությունը, որի վերջին հատվածը, տեղը չբավականացնելու պատճառով, փորագրված է աջակողմին (տախտակ I, նկ. 4)։

Ի ԹՎԱ[Ա]ՆԻՍ ՀԱՅՈՑ ՁՐՀ։ (1321) ԼԵՍՅ ՊԱՊ;ԱՔՍ ՈՒ ԳՐԻԳՈՐ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԵԱՁՍ Հ/ԱՒՐ ՄԵՐՈՑ ԱՊԻՐԱՏԻՆ ՈՒ ՎԱՐ. ԴԱՆՇԱՀ/Ի[Ն]։ ՈՐՔ/ ԷԿՂԱՐԴ/ԱՑՔ ՅԱ/Ղ/ԱԻ/Թ/Ս ՅՐԻՇԵՑՑՔ։

Առաջին տողի թվական բառում Կ-ի փոխարեն կրկնված է Ա-ն։ Պահպանվել է թվականի հարյուրավորը և տասնավորի ստորին ստեղնը, որը վերականգնվում է Հ։ Պապաք և Գրիգոր եղբայրների անվան հիշատակությամբ խաչքար է կանգնեցված եղել Արցախի Մանաշիթ գյուղի (Ադրբ. ՍՍՀ, Շահումյանի շրջանի Համանուն գյուղ) Թեղդանի մատուռի դռան հյուսիսային կողմում, որի ստորին մասում փորագրված է եղել. «Ի թուին ՉՄԷ (1308) եւ Գրիգոր ու Պապաք կանգնեցաք զխաչս ի բարեխաւսութիւն ծնողաց մերոց...»[13]։ Սա ևս հաստատում է խնդրո առարկա արձանագրության թվականի մեր վերծանությունը՝ ՉՀ (1321) (տախտակ III, նկ. 5)։ Արձանագրության մեջ հիշատակված անձնավորությունները ամենայն հավանականությամբ պատկանում են Խաչենի կամ Սյունիքի իշխանական տներից որևէ մեկի (թերևս Խաղբակյանների) շառավիղներին։

Վերը նշված խաչքարից մոտ հարյուր մետր հեռավորության վրա բացվեց կոտրված և գրեթե ամբողջովին քայքայված մի խաչարձան, որի վահանի մասում փորագրված է երեք տող արձանագրություն։ Թվականը զրված է հորիզոնական խաչաթևերի վերին և ներքին մասերում (տախտակ III, նկ. 6)։

Ի Թ :ՉԼԳ: (1284) ԵՍ ՎԱՐԴԱՆ ԿԱԼՆ;ԿԵՑ/Ի ԶԵԱՁՍ ՎԱՐԱԿԻՆ/Ի ՈՎ ԿԱՐԼԳ;ԱՑ ԱՆ ՈՂՈՐՄԻ։

Նույն տեղում գտնվել են երկու հուշակոթողներ, որոնք պատրաստված են ձիթհանի կոտրված քարերից։ Պահպանված մասերում կան գերան ամրացնելու անցքեր, որոնց օգնությամբ կարելի է որոշել այդ քարերի չափերը։ Կոթողներից մեկի խորագիր մակերեսի մեջ քանդակված են երեք ռելիեֆ խաչեր (տախտակ I, նկ. 5)։ Երկրորդի հարթեցված մակերեսի վերին մասում (տախտակ I, նկ. 6) երեք խորագիր մակերեսների մեջ քանդակված է մեկական խաչ։ Նման մի խաչ էլ կա հուշակոթողի ստորին աջ անկյունում։ Խաչերից ներքև փորագրված է երեք տողից բաղկացած հետևյալ հիշատակագիրը (տախտակ III, նկ. 7)։

Ի ԹՎԻՍ :Զ:Ծ:Ե: (1266) ԿԱՆԳ/ՆԵՑԱՒ ԼԶ/ԽԱՁՍ ԲԱՐ/ԵԽԱՒՍ ՔՐ/ԻՍՏԱՓՈՐԻ.

Գերեզմանատան արևմտյան մասում բացվեց դեղնավուն տուֆից մի հարթ տապանաքար (երկարությունը՝ 160 սմ, լայնությունը՝ 52 սմ)։ Մակերեսին փորագրված է երեք տող (տախտակ III, նկ. 8)։

ՅԱՅՍ ԼԷ/ ՀԱՆ/ԿՅԻՍՏ ԱՐԱԹՆԻՄ ՈՎ ԿԱՐԴԱՑՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ/ ԹՎ/ :Պ:Լ:Գ. (1384)։

Մոզ ավանի տարածքում հայտնաբերված հուշակոթողների մեծ մասը թվագրված է։ Դրանք ցույց են տալիս քանդակագործական ժողովրդական բնույթի արվեստի զարգացման մակարդակը տվյալ ժամանակահատվածում և օգնում են ճշտելու հնավայրի ընդգրկած սահմանները X—XIV դարերում։

ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

---

13 «Արցախ», երկասիրեաց Մակար եպիս. Բարխուտարեանց, Բաքու, 1895, էջ 252։